		<p>ԳՕՍ Ռ 50714-94</p> <p>ԳՕՍ Ռ 53019-2008</p> <p>ԳՕՍ Ռ 12.4.236-2007</p> <p>ԳՕՍ 23948-80 ՄՏԲ ԳՕՍ Ռ 12.4.218-2001 ՄՏԲ 916-2009</p>	<p>անհատական պաշտպանության միջոցներ. Ձեռնոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ»,</p> <p>«Կաշի արհեստական, անհատական պաշտպանության միջոցների համար. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Թելեր կարի, տեխնիկական եւ հատուկ նշանակության արտադրատեսակների համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Հագուստ հատուկ, ցածր ջերմաստիճանից պաշտպանելու համար. Տեխնիկական պահանջներ»,</p> <p>«Արտադրատեսակներ կարի. Ընդունման կանոններ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ հատուկ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»,</p> <p>«Թաթմաններ եւ ձեռնոցներ տնտեսական. Ընդհանուր տեխնիկական</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
			պայմաններ»,	
34.	<p>6-րդ կետ, 7-րդ ենթակետ՝ 7) բարձր եւ (կամ) ցածր ջերմաստիճաններից, տաքացած մակերեւույթի հետ շփումից, հալած մետաղի կայծերից եւ ցայտերից ուռքերի անհատական պաշտպանության միջոցների (կոշիկների) մասով՝ կոշիկը պետք է կանխի հալված մետաղի կայծերի ու ցայտերի ներթափանցումը դրա ներսի մակերեւույթ եւ ունենա բաց բոցի կարճաժամկետ ազդեցության նկատմամբ կայունություն, մինչեւ +150°C բարձր ջերմաստիճանների ազդեցությունից գամային մեթոդով ամրակվող կոշկատակի մանրակների ամրակման ամրության նվազման գործակիցը պետք է լինի 0,85-ից ոչ պակաս,</p>	<p>ԳՕՍՍ 12.4.032-95 ԳՕՍՍ 12.4.050-78 ԳՕՍՍ Ռ 12.4.187-97 ԳՕՍՍ 29122-91 ԳՕՍՍ Ռ 53019-2008 ԳՕՍՍ 1059-72</p>	<p>Կոշիկ հատուկ կաշվե, բարձր ջերմաստիճանից պաշտպանելու համար, բացի հրշեջների համար կոշիկից. Տեխնիկական պայմաններ», ԱԱՍՀ «Հատուկ կոշիկ թաղքե, բարձր ջերմաստիճանից պաշտպանելու համար. Տեխնիկական պայմաններ», ԱԱՍՀ. Կոշիկ հատուկ կաշվե, ընդհանուր արտադրական աղտոտվածությունից պաշտպանելու համար. Ընդհանուր տեխնիկական պայմաններ», «Անհատական պաշտպանության միջոցներ. Կոթերին, թակալներին եւ կարերին ներկայացվող պահանջներ», «Թելեր կարի, տեխնիկական եւ հատուկ նշանակության արտադրատեսակների համար. Տեխնիկական պայմաններ», «Կոշիկ թաղքե. Ընդունման կանոններ եւ փորձարկումների մեթոդներ»</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>ցածր ջերմաստիճանների ազդեցության պայմաններում օգտագործման համար նախատեսված կոշիկը պետք է պահպանի իր պաշտպանիչ հատկությունները պատրաստողի կողմից նշված ջերմաստիճանների տիրույթում (կլիմայական գոտում) շահագործման ամբողջ նորմատիվային ժամկետի ընթացքում,</p> <p>կոշիկի ներբանի նյութին, մանրակների ամրակման ամրությանը եւ դրա այլ պարամետրերին ներկայացվող պահանջները նշված են 4.3 կետի 9-րդ ենթակետում,</p> <p>կոշիկի վերնամասի հետ կոշկատակի մանրակների ամրակման ամրությունը պետք է լինի 120 Ն/սմ-ից ոչ պակաս,</p> <p>կոշիկի ներբանի նյութը պետք է ունենա 160° C-ից ոչ պակաս ջերմակայունություն,</p>	USF ISO 20345-2009	Անհատական պաշտպանության միջոցներ. Կոշիկ պաշտպանիչ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ	
35.	<p>4.6 կետ, 9-րդ ենթակետ՝</p> <p>9) բարձր եւ (կամ) ցածր ջերմաստիճանների պայմաններում կիրառվող գլխի անհատական պաշտպանության միջոցների (պաշտպանիչ սաղավարտների) մասով՝</p> <p>պետք է կանխվի պաշտպանիչ սաղավարտները հալված մետաղի ներթափանցումը սաղավարտի կորպուս (պետք է դադարեցվի</p>	<p>ԳՕՍՍ 12.4.087-84</p> <p>ԳՕՍՍ 12.4.091-80</p> <p>ԳՕՍՍ 12.4.128-83</p> <p>ԳՕՍՍ Ռ 12.4.207-99</p>	<p>ԱԱՍՀ. «Շինարարություն. Սաղավարտներ շինարարական. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Սաղավարտներ հանքափորի, պլաստմասսայե. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ. «Սաղավարտներ պաշտպանիչ. Ընդհանուր</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>կորպուսի՝ բաց բոցի առաջացմամբ այրվելը հալված մետաղի կամ բաց բոցի հետ շփումից 5 վայրկյան հետո),</p> <p>բարձր եւ (կամ) ցածր ջերմաստիճաններում աշխատանքի համար նախատեսված պաշտպանիչ սաղավարտները պետք է պահպանեն իրենց պաշտպանիչ հատկությունները շրջապատող օդի՝ պատրաստողի կողմից նշված ջերմաստիճանների տիրույթում,</p> <p>ըստ իրենց մեխանիկական բնութագրերի, ծակատման եւ հարվածամեղմման նկատմամբ դիմադրության՝ պաշտպանիչ սաղավարտները պետք է համապատասխանեն Մաքսային միության Տեխնիկական կանոնակարգի 4.3 կետի 13-րդ ենթակետով նախատեսված պահանջներին,</p>		<p>տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Սաղավարտներ պաշտպանիչ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ»</p>	
36.	<p>4.6 կետ, 11-րդ ենթակետ՝</p> <p>11) հալված մետաղի ցայտերից ու տաք մասնիկներից աչքերի (պաշտպանիչ ակնոցներ) եւ դեմքի (դեմքի պաշտպանիչ վահանակներ) անհատական պաշտպանության միջոցների մասով՝</p> <p>դեմքի վահանակի</p>	<p>ԳՕՍ 12.4.013-85</p> <p>ԳՕՍ 12.4.023-84</p> <p>ԳՕՍ 12.4.035-78</p>	<p>ԱԱՍՀ. Ակնոցներ պաշտպանիչ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Վահանակներ պաշտպանիչ, դեմքի. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»,</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>կենտրոնական ուղղահայաց գծով նվազագույն տեսագուտին պետք է լինի 150 մմ-ից ոչ պակաս,</p> <p>աչքի (պաշտպանիչ ակնոցներ) եւ դեմքի պաշտպանության վահանակներ) պաշտպանող անհատական պաշտպանության միջոցները պետք է բավարարեն սույն Տեխնիկական կանոնակարգի 4.3-րդ կետի 17-րդ եւ 19-րդ ենթակետերով նախատեսված էներգիայի հարվածին ներկայացված պահանջները,</p> <p>աչքերի անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան դրանց տակ տաք պինդ մարմինների ներթափանցման նկատմամբ կայունություն 7 վ-ից ոչ պակաս անընդմեջ ազդեցության ժամանակի դեպքում,</p> <p>ակնոցի՝ սպեկտրի ինֆրակարմիր տիրույթը արտացոլող ապակիները պետք է ունենան 60 տոկոսից ավելի</p>	<p>ԳՕՍՍ Ռ 51854-2001</p> <p>ԳՕՍՍ Ռ 51932-2002</p> <p>ԳՕՍՍ Ռ 12.4.230.1-2007</p> <p>ԳՕՍՍ Ռ 12.4.238-2007</p> <p>ՄՏԲ ԳՕՍՍ Ռ 51044-99 (</p> <p>ԳՕՍՍ 30808-2002</p> <p>ՄՏԲ ISO 12870-2007</p>	<p>ԱԱՍՀ. «Վահանակներ պաշտպանիչ, դեմքի, էլեկտրատեղակցողների համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Ոսպնյակներ ակնոցի, արեւապաշտպան. Տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ»,</p> <p>«Օպտիկա ակնաբուժական. Շրջանակներ շտկող ակնոցների. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»,</p> <p>ԱԱՍՀ «Աչքերի անհատական պաշտպանության միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»,</p> <p>ԱԱՍՀ «Աչքերի եւ դեմքի անհատական պաշտպանության միջոցներ եռակցման եւ նույնանման պրոցեսների դեպքում. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Ոսպնյակներ ակնոցի. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Օպտիկա ակնաբուժական. Շրջանակներ ակնոցների.</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	<p>սպեկտրային անդրադարձում՝ ալիքների երկարության 780-2000նմ տիրույթում,</p> <p>ակնոցի ապակիները պետք է լինեն կայուն 313 նմ-ից ոչ պակաս ալիքների երկարությունների ուլտրամանուշակագույն ճառագայթման նկատմամբ,</p> <p>դիտապակիների հաստությունը պետք է լինի 1,4 մմ-ից ոչ պակաս,</p>		Տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»	
37.	<p>4.7 կետ, 1-ին ենթակետ՝</p> <p>1) էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանող հատուկ պաշտպանիչ հագուստի մասով՝</p> <p>էներգաաղեղների ջերմային ռիսկերից հագուստը պետք է կիրառվի մարմնահագի սպիտակեղենի, գլխի դեմքի, ձեռքերի, ոտքերի ԱՊՄ-ների հավաքակազմով,</p> <p>էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանող հատուկ պաշտպանիչ հագուստի պաշտպանության մակարդակը, որը որոշվում է լվացման (քիմմաքրման)-, չորացման 5 ցիկլից հետո, չպետք է նվազի սկզբնական մակարդակից ավելի քան 5 տոկոսով՝ լվացման (քիմմաքրման)- չորացման 50 ցիկլից հետո,</p> <p>Մեխանիկական ազդեցությունների նկատմամբ</p>	<p>ԳՕՍՍ 12.4.221-2002</p> <p>ԳՕՍՍ 15530-93</p> <p>ԳՕՍՍ 19297-2003</p> <p>ԳՕՍՍ Ռ 12.4.234-2007</p> <p>ԳՕՍՍ Ռ 53019-2008</p>	<p>ԱԱՍՀ. «Հագուստ հատուկ, ջերմային ճառագայթման, ջերմափոխանակային ջերմության բարձր ջերմաստիճաններից պաշտպանելու համար. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»,</p> <p>«Առազաստակտավներ վուշե եւ կիսավուշե, տեխնիկական.</p> <p>Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Գործվածքներ բամբակե, հրապաշտպան վերջնամշակմամբ. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Հագուստ հատուկ, էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանելու համար. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»,</p> <p>«Թելեր կարի, տեխնիկական եւ հատուկ</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>էներգաաղեղների ջերմային ռիսկերից հատուկ պաշտպանիչ հագուստի նյութերի կայունության ցուցանիշների արժեքները եւ օդաթափանցելիության ցուցանիշը չպետք է նվազեն ավելի, քան 20 տոկոսով՝ լվացման-չորացման, (քիմմաքրման) 50 ցիկլից հետո,</p> <p>էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանող հատուկ պաշտպանիչ հագուստի նյութերի տեսակարար մակերեւութային էլեկտրական դիմադրության արժեքը չպետք է գերազանցի 100 մ-ն՝ լվացման (քիմմաքրման)-չորացման 50 ցիկլից հետո,</p> <p>հատուկ հագուստը, ջերմակայուն ձեռնոցները, ջերմակայուն սպիտակեղենը, ջերմակայուն ենթասաղավարտները պետք է պատրաստվեն հաստատուն ջերմակայուն հատկանիշներ ունեցող նյութերից եւ պետք է համապատասխանեն Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4.6-րդ կետի, 1-ին ենթակետով սահմանված պահանջներին ջերմափոխանակային ջերմությունից եւ ջերմային ճառագայթումից պաշտպանության մասով,</p> <p>էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանության համար նախատեսված</p>	<p>USF 1387-2003</p> <p>USF ԳՕՍՍ Ռ 12.4.218-2001</p> <p>ՍՏ ՂՀ ԳՕՍՍ Ռ 12.4.234-2010</p>	<p>նշանակության արտադրատեսակների համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ արտադրական եւ հատուկ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ հատուկ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ հատուկ, էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանելու համար. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>անհատական պաշտպանության միջոցների պատրաստման համար կիրառվող նյութերի այրվելու ժամանակը 10 վ-ն բոցի ազդեցությանը ենթարկվելուց եւ դրանից դուրս բերվելուց հետո չպետք է գերազանցի 2 վ-ը, ածխացումը չպետք է գերազանցի 100 մմ-ը,</p> <p>Էներգաաղեղների ջերմային ռիսկերից հատուկ պաշտպանիչ հագուստը պետք է օգտագործողին պաշտպանի երկրորդ կարգի այրվածքներից էներգաաղեղի՝ 5-100 կալ/սմ² (20,93 - 418,6 Ջ/սմ²) խտությամբ ընկնող ջերմային հոսքի ինտենսիվությամբ, որը նշված է արտադրատեսակին կցված փաստաթղթերում,</p> <p>Էներգաաղեղների ջերմային ռիսկերից հատուկ պաշտպանիչ հագուստ պատրաստելու համար պետք է օգտագործվեն ջերմակայուն եւ հրակայուն ոչ մետաղական օժանդակ պարագաներ (ֆուրնիտուր) կամ ֆուրնիտուրը պետք է ծածկվի հրակայուն նյութերի շերտերով,</p> <p>Էներգաաղեղների ջերմային ռիսկերից հատուկ պաշտպանիչ հագուստի նյութերը պետք է ունենան 4000 ցիկլից ոչ պակաս կայունություն մոխրագույն շինելի մահուդով քերամաշման նկատմամբ, 800 Ն-ից ոչ պակաս</p>			

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>կայունություն խզման ծանրաբեռնվածության նկատմամբ, $30\text{դմ}^3/\text{մ}^2/\text{վ}$ օդաթափանցելիություն,</p> <p>արտադրատեսակի կարերի խզման ծանրաբեռնվածությունը պետք է լինի 250 Ն-ից ոչ պակաս,</p> <p>էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանող հատուկ հագուստի արտադրության համար օգտագործվող ճարմանդները այնպես պետք է նախագծված լինեն, որպեսզի ջերմային ազդեցության ենթարկվելուց հետո թույլ չտրվի դրանց ինքնաբացումը,</p> <p>էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանող հատուկ պաշտպանիչ հագուստի ջերմակայուն հատկությունները պետք է պահպանվեն պատրաստողի կողմից նշված պահման ժամկետում եւ նախատեսված պայմաններում՝ առանց օգտագործողի կողմից լրացուցիչ գործողություններ ձեռնարկելու,</p>			
38.	<p>4.7 կետ, 3-րդ ենթակետ՝</p> <p>3) էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանող դեմքի անհատական պաշտպանության միջոցների մասով (դեմքի պաշտպանիչ վահանակներ)՝</p> <p>դեմքի պաշտպանիչ վահանակները չպետք է ունենան</p>	<p>ԳՕՍՍ 12.4.023-84</p> <p>ԳՕՍՍ 12.4.035-78</p> <p>ԳՕՍՍ Ռ 12.4.230.1-2007</p>	<p>ԱԱՍՀ «Վահանակներ պաշտպանիչ, դեմքի. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»,</p> <p>ԱԱՍՀ. «Վահանակներ պաշտպանիչ, դեմքի, էլեկտրատեղակայողների համար. Տեխնիկական</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	<p>հոսանահաղորդ ելուստներ, դեմքի պաշտպանիչ վահանակների դիտապակիները պետք է ունենան 1,4 մմ-ից ոչ պակաս հաստություն, իսկ շրջանակով դիտապակու տեսագոտին դեմքի վահանակի կենտրոնական ուղղահայաց գծով պետք է կազմի 150 մմ-ից ոչ պակաս,</p> <p>վահանակի էկրանը պետք է պատրաստվի 1,25 մմ/վ-ը չգերազանցող այրման արագություն ունեցող նյութից,</p> <p>դեմքի պաշտպանիչ վահանակը պետք է ապահովի դեմքի պաշտպանությունը առջեւից ու կողքերից,</p> <p>դիտապակու արտաքին կողմը պետք է ունենա ջերմակայուն եզրակ էներգաաղեղի առաջացման պահին բնկումից խուսափելու համար,</p> <p>պաշտպանիչ վահանակի դիտապակիները պետք է պահվեն իրենց տեղում՝ դեմքի վահանակների ցանկացած դիրքի դեպքում, ապահովեն պաշտպանություն ուլտրամանուշակագույն ճառագայթումից եւ ունենան 0,6</p>	ԳՕՍՏ Ռ 12.4.238-2007	<p>պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Աչքերի անհատական պաշտպանության միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»,</p> <p>ԱԱՍՀ «Աչքերի եւ դեմքի անհատական պաշտպանության միջոցներ եռակցմանը եւ նույնանման պրոցեսների դեպքում. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	Ջ-ից ոչ պակաս, իսկ հարվածակայուն կատարման դեպքում 1,2 Ջ-ից ոչ պակաս կինետիկ էներգիայի միակի հարվածի նկատմամբ կայունություն,			
39.	<p>4.7 կետ, 5-րդ ենթակետ՝</p> <p>5) էներգաաղեղների ջերմային ռիսկերից հագուստի հետ մեկ հավաքակազմով կիրառվող ոտքերի անհատական պաշտպանության միջոցների (կոշիկների) մասով՝</p> <p>կոշիկի ներքանը պետք է ունենա յուղակայուն եւ բենզակայուն հատկություններ եւ 60 վ-ից ոչ պակաս դիմակայի +300°C-ից ոչ ցածր ջերմաստիճանի ազդեցությանը. ժամանակը որոշվում է փորձարկման մեթոդներով,</p> <p>կոշկաքիթը պետք է ապահովի 5 Ջ-ից ոչ պակաս էներգիայով հարվածներից պաշտպանություն,</p> <p>կոշիկը չպետք է պարունակի մետաղական մասեր, բոլոր կարերը պետք է կարված լինեն ջերմակայուն թելերով, որպես ձմեռային կոշիկների ջերմապահպանիչ՝ թույլատրվում է բնական մորթու կամ արհեստական հրակայուն ջերմապահպանիչների օգտագործումը,</p>	<p>ԳՕՍ 12.4.032-95</p> <p>ԳՕՍ Ռ 53019- 2008</p>	<p>Կոշիկ հատուկ կաշվե, բարձր ջերմաստիճանից պաշտպանելու համար, բացի հրշեջների համար կոշիկից. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Թելեր կարի, տեխնիկական եւ հատուկ նշանակության արտադրատեսակների համար. Տեխնիկական պայմաններ»,</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	կոշիկի ներբանի նյութին, մանրակների ամրակման ամրությանը եւ դրա այլ պարամետրերին ներկայացվող պահանջները նշված են 4.3 կետի 9-րդ ենթակետում,			
40.	4.7 կետ, 7-րդ ենթակետ՝ 7) էներգաաղեղների ջերմային ռիսկերից պաշտպանող մարմնահագի ջերմակայուն սպիտակեղենը, ջերմակայուն ձեռնոցները եւ ջերմակայուն ենթասաղավարտները պետք է օգտագործողին պաշտպանեն երկրորդ կարգի այրվածքներ ստանալուց, պատրաստվեն Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4.6-րդ կետի, 1-ին ենթակետում նշված ջերմակայուն հատկանիշները ունեցող հրակայուն նյութից, չպետք է այրվեն, հալվեն եւ մարմրեն 10 վ-ի ընթացքում բաց բոցի ազդեցությանը ենթարկվելուց հետո, բաց բոցի ազդեցության նկատմամբ կայունությունը պետք է պահպանվի 5 անգամ լվանալուց (քիմմաքրումից) հետո,	ԳՕՍՏ 29122-91	«Անհատական պաշտպանության միջոցներ. Կոթերին, թակալներին եւ կարերին ներկայացվող պահանջներ»,	
41.	4.7 կետ, 9-րդ ենթակետ՝ 9) էլեկտրահարումից, էլեկտրաստատիկ, էլեկտրական եւ էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությունից, ինչպես նաեւ ստատիկ էլեկտրականության ազդեցությունից պաշտպանող	ԳՕՍՏ 12.1.038-82 ԳՕՍՏ 12.4.172-87	ԱԱՍՀ.«էլեկտրաանվտանգություն. Հպման լարման եւ հոսանքների թույլատրելի սահմանային արժեքներ», «Հավաքակազմ անհատական, էկրանավորող,	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	<p>հատուկ հագուստի եւ անհատական պաշտպանության այլ միջոցների մասով՝</p> <p>հատուկ հագուստը եւ անհատական պաշտպանության այլ միջոցները պետք է ունենան 15 կՎ/մ-ից ոչ ավելի էլեկտրականացում եւ օգտագործողին պաշտպանեն էլեկտրահարումից, ինչպես նաեւ սահմանային թույլատրելի մակարդակները գերազանցող էլեկտրաստատիկ, էլեկտրական կամ էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունից,</p> <p>էլեկտրաստատիկ, էլեկտրական կամ էլեկտրամագնիսական դաշտի ինտենսիվության նվազման գործակիցը հաճախականությունների աշխատանքային տիրույթում պետք է լինի 30-ից ոչ պակաս,</p> <p>էլեկտրաստատիկ, էլեկտրական կամ էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությունից պաշտպանող հատուկ հագուստը պետք է պահպանի իր պաշտպանիչ հատկությունները շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում,</p>	<p>ԳՕՍՍ 11209-85</p> <p>ԳՕՍՍ 15530-93</p> <p>ԳՕՍՍ 27575-87</p> <p>ԳՕՍՍ 27653-88</p> <p>ԳՕՍՍ 29122-91</p> <p>ԳՕՍՍ Ռ 12.4.246-2008</p> <p>ԳՕՍՍ Ռ 53019-2008</p> <p>ԳՕՍՍ Ռ ԵՆ 1149-5-2008</p> <p>ՍՄԲ 1387-2003</p>	<p>արդյունաբերական հաճախականության էլեկտրական դաշտերից պաշտպանելու համար. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»,</p> <p>«Գործվածքներ բամբակե եւ խառը, պաշտպանիչ, հատուկ հագուստի համար»,</p> <p>«Առազաստակտավներ եւ երկթելեր. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Կոստյումներ տղամարդու, ընդհանուր արտադրական աղտոտվածությունից եւ մեխանիկական ազդեցությունից պաշտպանելու համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Կոստյումներ տղամարդու, մեխանիկական ազդեցությունից, ջրից եւ ակալիներից պաշտպանելու համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Անհատական պաշտպանության միջոցներ. Կոթերին, թակալներին եւ կարերին ներկայացվող պահանջներ»,</p> <p>ԱԱՍՀ «Ձեռքերի անհատական</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>Էլեկտրական կամ էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունից պաշտպանության համար նախատեսված հատուկ հագուստի հաղորդիչ մասերի էլեկտրական դիմադրությունը չպետք է գերազանցի 10 Օհմ-ը,</p> <p>նշված հատուկ հագուստը պետք է ունենա բամբակե գործվածքից պատրաստված</p>	<p>USF ԳՕՍ Ռ 12.4.218-2001</p>	<p>պաշտպանության միջոցներ. Ձեռնոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ»,</p> <p>«Թելեր կարի, տեխնիկական եւ հատուկ նշանակության արտադրատեսակների համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Հատուկ պաշտպանիչ հագուստ. Էլեկտրաստատիկ հատկություններ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ արտադրական եւ հատուկ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ հատուկ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	<p>միջադիր, որը օգտագործողի մարմինը մեկուսացնում է էլեկտրահաղորդիչ գործվածքից եւ մետաղական մանրակներից,</p> <p>նշված հատուկ հագուստի նյութերը պետք է ունենան կայունություն այն մեխանիկական ծանրաբեռնվածությունների եւ օդաթափանցելիության նկատմամբ, որոնց մասին նշված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4.7-րդ կետի 1-ին ենթակետում,</p> <p>հատուկ հագուստի պատրաստման համար օգտագործվող ճարմանդները պետք է ապահովեն նման հագուստի բաղադրամասերի հուսալի էլեկտրական հպումը եւ չթույլատրեն դրա ինքնաբացումը,</p> <p>նշված հատուկ հագուստը պատրաստողի կողմից նշված պայմաններում դրա օգտագործման ամբողջ ընթացքում պետք է ապահովվի ներքին շերտի՝ +40°C-ից ոչ ավելի ջերմաստիճան,</p> <p>ստատիկ էլեկտրականության ազդեցությունից անհատական պաշտպանության միջոցների պատրաստման համար պետք է կիրառվեն 10^7 Օհմ տեսակարար մակերեսության էլեկտրական դիմադրություն ունեցող նյութեր կամ լիցքի նվազման հատկություն ունեցող նյութեր,</p>			

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>Էկրանավորող ԱՊՄ-ները պետք է ապահովեն պաշտպանություն էլեկտրահարումից, որը անցնում է մարդու մարմնի միջով լարման տակ գտնվող, էլեկտրամագնիսական կամ էլեկտրաստատիկ եղանակով մակաձված եւ 25 Վ-ից բարձր արժեք ունեցող անջատված էլեկտրասարքավորմանը հպվելու պահին,</p> <p>Էկրանավորող ԱՊՄ-ները պետք է զուգահոսագծի միացման (շունտավորում) միջոցով մարդու մարմինը պաշտպանեն՝ հատուկ պաշտպանիչ հագուստի, կոշիկների եւ ձեռքերի պաշտպանության միջոցների էլեկտրահաղորդիչ գալվանական կապող տարրերի միջով մարդու մարմնով անցնող էլեկտրական հոսանքով էլեկտրահարումից,</p> <p>Էկրանավորող ԱՊՄ հագած մարդու մարմնով անցնող էլեկտրական հոսանքի արժեքը չպետք է գերազանցի արդյունաբերական հաճախականության համար 6 մԱ սահմանային թույլատրելի արժեքը,</p> <p>շունտավորող ԱՊՄ-ների կազմի մեջ մտնող էկրանավորող հագուստի լրակազմի էլեկտրական դիմադրությունը չպետք է</p>			

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>գերազանցի 10 Օհմ-ը, ձեռքերի պաշտպանության միջոցների դիմադրությունը պետք է լինի 30 Օհմ-ից ոչ ավելի,</p> <p>էկրանավորող ԱՊՄ-ների կազմի մեջ մտնող ձեռքերի պաշտպանության միջոցները, կոշիկներն ու հագուստը պետք է ունենան մարդու մարմինը էլեկտրահաղորդիչ տարրերից մեկուսացնող մեկուսապատվածք. ստատիկ էլեկտրականության ազդեցությունից անհատական պաշտպանության միջոցների էլեկտրահաղորդիչ տարրի եւ հողի միջեւ էլեկտրական դիմադրությունը պետք է կազմի 10^6-10^8 Օհմ,</p> <p>կոշիկի ներքանի կրնկակալի եւ ընթացային կողմի միջեւ էլեկտրական դիմադրությունը պետք է կազմի 10^6-10^8 Օհմ,</p> <p>ստատիկ էլեկտրականությունից ԱՊՄ-ների հավաքակազմ հագած մարդու եւ հողի միջեւ դիմադրությունը պետք է լինի 10^8 Օհմ-ից ոչ պակաս,</p> <p>հակաէլեկտրաստատիկ օղակներն ու ապարանջանները պետք է ապահովեն մարդ-հող շղթայում 10-10^8 Օհմ էլեկտրական դիմադրություն,</p> <p>ստատիկ էլեկտրականության ազդեցությունից պաշտպանող անհատական պաշտպանության միջոցները պետք է բացառեն</p>			

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>շրջակա միջավայրի բոցավառման նվազագույն էներգիայի 40 տոկոսը չգերազանցող էներգիայով ստատիկ էլեկտրականության կայծային պարպման առաջացումը կամ իմպուլսում եղած լիցքի այնպիսի մեծությամբ էներգիայով ստատիկ էլեկտրականության կայծային պարպման առաջացումը, որը գերազանցում է շրջակա միջավայրի համար իմպուլսում եղած լիցքի բոցավառման արժեքի 40 տոկոսը,</p>			
42.	<p>4.7 կետ, 11-րդ ենթակետ՝</p> <p>11) էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունից աչքերի (պաշտպանիչ ակնոցներ) եւ դեմքի (դեմքի պաշտպանիչ վահանակներ) անհատական պաշտպանության միջոցների մասով՝</p> <p>անհատական պաշտպանության տվյալ միջոցների օպտիկական ցուցանիշներին ներկայացվող պահանջները շարադրված են Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4.3-րդ բաժնի 17-րդ եւ 19-րդ կետերում,</p> <p>աչքերի եւ դեմքի անհատական պաշտպանության միջոցները պետք է ապահովեն աչքերի եւ դեմքի պաշտպանությունը առջեւից եւ կողքերից,</p>	<p>ԳՕՍՍ 12.4.013-85</p> <p>ԳՕՍՍ 12.4.023-84</p> <p>ԳՕՍՍ Ռ 51854-2001</p> <p>ԳՕՍՍ Ռ 51932-2002</p> <p>ԳՕՍՍ Ռ 12.4.230.1-2007</p> <p>ՍՄԲ ԳՕՍՍ Ռ 51044-99</p> <p>(ԳՕՍՍ 30808-</p>	<p>ԱԱՍՀ. «Ակնոցներ պաշտպանիչ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ «Վահանակներ դեմքի պաշտպանության. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»,</p> <p>«Ոսպնյակներ ակնոցի, արեւապաշտպան. Տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ»,</p> <p>«Օպտիկա ակնաբուժական. Շրջանակներ շտկող ակնոցների. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»,</p> <p>ԱԱՍՀ «Աչքերի անհատական</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	<p>նշված անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան 150 մմ-ից ոչ պակաս նվազագույն տեսագոտի կենտրոնական ուղղահայաց գծով, ապակին (ապակիները) պետք է լինի անգույն, ապահովի էլեկտրամագնիսական դաշտից պաշտպանությունը եւ ունենա 1,2 Ջ-ից ոչ պակաս կինետիկ էներգիայով հարվածի նկատմամբ կայունություն,</p>	<p>2002) USF ISO 12870-2007</p>	<p>պաշտպանության միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»։ Ոսպնյակներ ակնոցի. Ընդհանուր տեխնիկական պայմաններ Օպտիկա ակնաբուժական: Շրջանակներ ակնոցների: Տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ</p>	
43.	<p>4.7 կետ, 13-րդ ենթակետ՝ 13) էլեկտրական հոսանքի ազդեցությունից պաշտպանող անհատական պաշտպանության դիէլեկտրիկ միջոցների մասով (դիէլեկտրիկ ձեռնոցներ, դիէլեկտրիկ բոտիկներ եւ դիէլեկտրիկ կրկնակոշիկներ)՝ Էլեկտրական հոսանքի ազդեցությունից անհատական պաշտպանության դիէլեկտրիկ միջոցները պետք է պատրաստվեն դիէլեկտրիկ նյութերից, որոնք պահպանում են իրենց պաշտպանիչ հատկությունները պատրաստողի կողմից նախատեսված ամբողջ ժամկետի ընթացքում՝ կիրառման պայմանները պահպանելու դեպքում, Էլեկտրական հոսանքի ազդեցությունից անհատական պաշտպանության դիէլեկտրիկ միջոցները պետք է լինեն</p>	<p>ԳՕՍ 12.1.038-82 ԳՕՍ 12.4.183-91 ԳՕՍ Ռ 12.4.246-2008 ԳՕՍ 13385-78 ԳՕՍ Ռ ԵՆ 1149-5-2008</p>	<p>ԱԱՍՀ. «Էլեկտրաանվտանգություն. Հպման լարման եւ հոսանքների թույլատրելի սահմանային արժեքները», ԱԱՍՀ «Նյութեր ձեռքերի պաշտպանության միջոցների համար. Տեխնիկական պահանջներ», ԱԱՍՀ «Ձեռքերի անհատական պաշտպանության միջոցներ. Ձեռնոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ», «Հատուկ դիէլեկտրիկ կոշիկներ պոլիմերային նյութերից. Տեխնիկական պայմաններ», ԱԱՍՀ «Հագուստ հատուկ,</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>հերմետիկ եւ կայուն արտաքին մեխանիկական եւ քիմիական գործոնների, ինչպես նաեւ խոնավության ազդեցության նկատմամբ եւ շահագործման ընթացքում պահպանեն իրենց պաշտպանիչ հատկությունները,</p> <p>կորստի հոսանքի առավելագույն արժեքը անհատական պաշտպանության դիէլեկտրիկ միջոցների համար չպետք է գերազանցի 9 մԱ-ն,</p> <p>կոշիկները պետք է ունենան բամբակե գործվածքից մեկուսիչ միջադիր,</p> <p>դիէլեկտրիկ հատուկ հագուստի էլեկտրական դիմադրությունը պետք է լինի 4կՕհմ-ից ոչ պակաս, դիէլեկտրիկ երկարաճիտ կոշիկների եւ կրկնակոշիկների էլեկտրական դիմադրությունը՝ 2կՕհմ-ից ոչ պակաս, դիէլեկտրիկ ձեռնոցների համար տրված լարվածության դեպքում կորստի հոսանքը չպետք է գերազանցի 9մԱ-ն,</p> <p>էլեկտրական հոսանքի ազդեցությունից պաշտպանող անհատական պաշտպանության դիէլեկտրիկ միջոցները պետք է ստուգվեն էլեկտրաանվտանգության վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերով նախատեսված պարբերականությամբ, որը պատրաստողի կողմից նաեւ</p>		<p>պաշտպանիչ. էլեկտրաստատիկ հատկություններ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»,</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	նշվում է արտադրատեսակին կցվող փաստաթղթերում:			
44.	<p>Ց-րդ կետ, 1-րդ ենթակետ՝</p> <p>1) հատուկ ազդանշանային բարձր տեսանելիության հագուստը պետք է պատրաստվի կիրառելով լուսաձորիչ եւ լուսաանդրադարձնող նյութեր, որոնց տեղակայված ազդանշանային տարրերի մակերեսը պակաս չէ 0,14 մ-ից՝ երբ դրանք լուսաձորիչ նյութից են, պակաս չէ 0,10 մ²-ից, երբ դրանք լուսաանդրադարձնող նյութից են եւ պակաս չէ 0,20 մ²-ից, երբ դրանք համակցված նյութից են,</p> <p>Լուսաանդրադարձնող նյութերի լուսաանդրադարձման գործակիցը դիտման անկյան 12^o եւ լուսավորության անկյան 5^o արժեքների դեպքում պետք է լինի 250 կդ/(լուքս-մ2)-ից ոչ պակաս՝ 1-</p>	<p>ԳՕՍ Ռ 12.4.219-99</p> <p>ԳՕՍ 11209-85</p> <p>ԳՕՍ 15530-93</p> <p>ԳՕՍ 21790-2005</p> <p>ԳՕՍ 28000-2004</p> <p>ԳՕՍ 29122-91</p> <p>ԳՕՍ Ռ 50714-94</p> <p>ԳՕՍ Ռ 53019-</p>	<p>ԱԱՍՀ «Հագուստ՝ հատուկ ազդանշանային բարձր տեսանելիության. Տեխնիկական պահանջներ»,</p> <p>«Գործվածքներ բամբակե եւ խառը, պաշտպանիչ, հատուկ հագուստի համար»,</p> <p>«Առագաստակտավներ վուշե եւ կիսավուշե, տեխնիկական. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Գործվածքներ՝ բամբակե եւ խառը, հագուստի. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Գործվածքներ հագուստի, զուտ բրդյա, բրդյա եւ կիսաբրդյա. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Անհատական պաշտպանության միջոցներ. Կոթերին, թակալներին եւ կարերին ներկայացվող պահանջներ»,</p> <p>«Կաշի արհեստական, անհատական պաշտպանության միջոցների համար. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	<p>ին դասի նյութերի, 330 կգ/(յուքս-մ2)-ից ոչ պակաս՝ 2-րդ դասի նյութերի եւ 65 կգ/(յուքս-մ2)-ից ոչ պակաս՝ համակցված նյութերի համար,</p> <p>ֆոնային եւ համակցված նյութերի գունային բնութագրերը պետք է գտնվեն գունավորության կորրեկցիաների տիրույթում՝</p> <p>դեղին լուսածորիչ նյութի համար՝ (0,387, 0,610 – 0,356, 0,494 – 0,398, 0,452 – 0,460, 0,540),</p> <p>նարնջագույն լուսածորիչ նյութի համար՝ (0,610, 0,390 – 0,535, 0,375 – 0,570, 0,340 – 0,655, 0,344),</p> <p>կարմիր լուսածորիչ նյութի համար՝ (0,655, 0,344 – 0,570, 0,340 – 0,595, 0,314 – 0,690, 0,310),</p> <p>Միագույն եւ համակցված նյութերի պայծառության գործակիցը պետք է գերազանցի՝</p> <p>դեղին լուսածորիչ նյութի համար՝ 0,76-ից ոչ պակաս,</p> <p>նարնջագույն լուսածորիչ նյութի համար՝ 0,40-ից ոչ պակաս,</p> <p>կարմիր լուսածորիչ նյութի համար՝ 0,25-ից ոչ պակաս:</p> <p>ազդանշանային տարրերի՝ շերտերի տեսքով կատարված լինելու դեպքում դրանք պետք է լինեն 50 մմ-ից ոչ պակաս</p>	<p>2008</p> <p>ԳՕՍՏ 27643-88</p> <p>ԳՕՍՏ 29057-91</p> <p>ԳՕՍՏ 29058-91</p> <p>ԳՕՍՏ 23948-80</p> <p>ՄՏՔ 1387-2003</p> <p>ՄՏՔ ԳՕՍՏ Ռ 12.4.218-2001</p>	<p>«Թելեր կարի, տեխնիկական եւ հատուկ նշանակության արտադրատեսակների համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Կոստյումներ տղամարդու, ջրից պաշտպանելու համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Կոստյումներ տղամարդու, ոչ թունավոր փոշուց պաշտպանելու համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Կոստյումներ կանացի, ոչ թունավոր փոշուց պաշտպանելու համար. Տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Արտադրատեսակներ կարի. Ընդունման կանոններ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ արտադրական եւ հատուկ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>ԱԱՍՀ. «Հագուստ հատուկ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթա- գրություն
	<p>լայնությամբ, իսկ դրանց տեղակայումը պետք է ապահովի մարդու մարմնի տեսողական նշմարումը,</p> <p>հատուկ ազդանշանային բարձր տեսանելիության հագուստի նյութերը պետք է պահպանեն լուսասանդրադարձիչ հատկությունները պատրաստողի կողմից սահմանված շահագործման ամբողջ ընթացքում,</p>			
45.	<p>4.14 կետ՝</p> <p>4.14. Մաշկի անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն հետտեսյալ պահանջներին՝</p> <p>1) Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրված մաշկի անհատական պաշտպանության միջոցները ըստ նշանակության օգտագործելիս չպետք է վնաս հասցնեն մարդու կյանքին եւ առողջությանը եւ ունենան ուղղորդված արդյունավետություն որոշակի վնասակար արտադրական գործոնների ազդեցությունից,</p> <p>2) մաշկի անհատական պաշտպանության միջոցների անվտանգությունը ապահովվում է դրանց կազմին, միկրոկենսաբանական ցուցանիշներին, թունավոր տարրերի պարունակության</p>	<p>ԳՕՍՏ 12.4.068-79</p> <p>ԳՕՍՏ Ռ 51391-99</p> <p>ԳՕՍՏ Ռ 51579-2000</p> <p>ԳՕՍՏ Ռ 52343-2005</p> <p>ԳՕՍՏ Ռ 52345-2005</p> <p>ԳՕՍՏ Ռ 52952-2006</p> <p>ԳՕՍՏ Ռ 53427-</p>	<p>ԱԱՍՀ «Մաշկի անհատական պաշտպանության միջոցներ. Դասակարգում եւ անվտանգության ընդհանուր պահանջներ»</p> <p>«Օձանելիքակոսմետիկական արտադրատեսակներ. Տեղեկություններ սպառողի համար. Ընդհանուր պահանջներ»,</p> <p>«Արտադրատեսակներ կոսմետիկական, հեղուկ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Կրեմներ կոսմետիկական. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Արտադրատեսակներ կոսմետիկական, հիգիենիկ, լվացող. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>մակարդակին, թունաբանական անվտանգությանը, կլինիկական-լաբորատոր անվտանգությանը, սպառողական փաթեթվածքին եւ սպառողների համար տեղեկություններին ներկայացվող պահանջների ամբողջականությամբ,</p> <p>3) որպես մաշկի անհատական պաշտպանության միջոցների բաղադրամասեր արգելվում է օգտագործել յուրաքանչյուր նյութից 10 տոկոսից ավելի քանակով սիլիկոններ, հանքային հղկանյութեր, այրվող, ցնդող, օրգանական լուծիչներ, ինչպես նաեւ նյութեր, որոնք արգելվում է օգտագործել որպես օծանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրամասեր,</p> <p>4) թույլատրվում է որպես մաշկի անհատական պաշտպանության միջոցների բաղադրամասեր օգտագործել ներկանյութեր եւ ներկանյութերի աղեր, պահածոյացնող նյութեր (կոնսերվանտներ), ուլտրամանուշակագույն գտիչներ եւ որպես</p>	<p>2009</p> <p>USF 1555-2005</p>	<p>«Դոնդողներ կոսմետիկական. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Կոսմետիկական արտադրատեսակներ, աերոզոլային փաթեթվածքով. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»,</p> <p>«Օծանելիքակոսմետիկական արտադրանք. Տեղեկություններ սպառողի համար. Ընդհանուր պահանջներ»</p>	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրամասեր կիրառելու համար թույլատրված այլ նյութեր,</p> <p>5) հակամանրէային ազդեցությամբ մաշկի անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան հակամանրէային ակտիվությամբ վարակիչ հիվանդությունների հարուցիչներ գրամ-բացասական եւ գրամ-դրական բակտերիաների նկատմամբ (սանիտարացուցադրական տեսակները՝ <i>Escherichia coli</i>, <i>Staphylococcus aureus</i>),</p> <p>6) հակասնկային ազդեցությամբ մաշկի անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան հակասնկային (ֆունգիցիդային) ակտիվություն վարակների հետեւյալ հարուցիչների նկատմամբ՝ <i>T</i>-դերմատոֆիտ, կանդիդոզների հարուցիչներ, այլ ախտածին դերմատոֆիտ սնկեր (սանիտարացուցադրական տեսակը՝ <i>Candida albicans</i>),</p> <p>7) ցածր ջեմաստիճանների ազդեցությունից մաշկի անհատական պաշտպանության միջոցները (ցրտահարությունից ձեռքերի եւ դեմքի կրեմները) պետք է լինեն կայուն ցածր ջերմաստիճանների նկատմամբ եւ դիմակայեն 3 ցիկլից ոչ պակաս</p>			

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>սառեցման եւ հալեցման (-20°C - +20° C), չպետք է շերտատվեն եւ փոխեն իրենց զգայորոշման (օրգանոլեպտիկ) եւ ֆիզիկաքիմիական հատկությունները:</p> <p>Ցածր ջերմաստիճանների ազդեցությունից պաշտպանող նշված միջոցները չպետք է մաշկային ծածկույթի վրա թաղանթներ առաջացնեն եւ խոչընդոտեն բնականոն գազափոխանակությանը, մականշվածքի մեջ պետք է նշված լինի կիրառման նվազագույն ջերմաստիճանը,</p> <p>8) մաշկի անհատական պաշտպանության միջոցների 1գ-ում կամ 1սմ³-ում խմորիչների, խմորասնկանման սնկերի եւ բորբոսասնկերի քանակությունը չպետք է գերազանցի 1000 գաղութ առաջացնող միավորը,</p> <p>9) մաշկի անհատական պաշտպանության միջոցների 1գ-ում կամ 1սմ³-ում խմորիչների, խմորասնկանման սնկերի եւ բորբոսասնկերի քանակությունը չպետք է գերազանցի 100 գաղութ առաջացնող միավորը,</p> <p>10) բարակաղիքային մանրէները եւ ախտածին ստաֆիլակոկերը չպետք է հայտնաբերվեն արտադրանքի 1գ-ում կամ 1սմ³-ի մեջ,</p> <p>11) մաշկի անհատական</p>			

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը. Տեղեկություններ փոփոխության մասին	Ստանդարտի անվանումը	Ծանոթագրություն
	<p>պաշտպանության միջոցների մեջ պետք է բացակայի կապտաթարախային ցուպիկը,</p> <p>12) մաշկի անհատական պաշտպանության միջոցներում թույլատրվում է մկնդեղի՝ 5 մգ/կգ-ից ոչ պակաս պարունակությունը, կապարի՝ 5 մգ/կգ-ից ոչ պակաս պարունակությունը եւ սնդիկի՝ 1 մգ/կգ-ից ոչ ավելի պարունակությունը,</p> <p>13) մաշկի անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան մաշկի միջոցով ներծծման, գրգռիչ եւ զգայունացնող ազդեցություններ,</p> <p>14) ռեգեներատիվ, վերականգնողական եւ մաքրող տիպի մաշկի անհատական պաշտպանության միջոցների օգտագործումը ճառագայթաակտիվ նյութերի եւ իոնացնող ճառագայթման ազդեցության պայմաններում չի թույլատրվում:</p>			